*Հավելված 1, 2*
*Չարենցավան քաղաքի*
*2022 թվականի*
*բնապահպանական*
*ծրագրի*

| | |
|---|---|
| *Համաձայնեցված է* | *Համաձայնեցված է* |
| *ՀՀ Շրջակա միջավայրի նախարար* | *ՀՀ Առողջապահության նախարար* |
| ________________ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ | ________________ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ |
| <<___>>____________________ 2021թ. | <<___>>____________________ 2021թ. |

## *Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները*

# ԾՐԱԳԻՐ

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. *Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակները.*
2. *Ծրագրի իրականացման ժամկետները և ծախսերը.*

### 1. Ծրագրի համառոտ նկարագրությունը և նպատակները

Չարենցավան համայնքի <<Չուլակենտրոն>> ԲԲԸ-ն և <<Ասկե Գրուպ>> ԲԲԸ-ն իրենց կազմում ունեն ձուլման արտադրամասեր, որոնց աշխատանքի հետևանքով շրջակա միջավայր են արտանետվում ինչպես փոշի, այնպես էլ ծանր մետաղներ պարունակող թափոններ:

Մթնոլորտում աղտոտող նյութերի բացասական ազդեցությունը կանխելու (նվազեցնելու) նպատակով անհրաժեշտություն է առաջացել մշակել բնապահպանական ծրագիր և հնարավորինս նվազեցնել աղտոտող նյութերի սահմանային քանակությունը, որի դեպքում նորմալ կենսագործունեությունը չի խաթարվում: Իրականացվող ծրագրի գլխավոր նպատակն այն է, որպեսզի առավելագույն չափով նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները:

Ուշադրության արժանի են նաև վտանգավոր քիմիական նյութերը, արտադրության պրոցեսում առաջացող վտանգավոր արտադրական թափոնները, ինչպես նաև մարդու կենսագործունեության հետևանքով առաջացած կենցաղային թափոնները, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման հիմնական աղբյուրներից մեկը և որոնց գործածությունը պահանջում է կառավարման լուրջ մոտեցում:

Վնասակար արտանետումներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում նաև համայնքի ազգաբնակչության առողջության վրա, մասնավորապես բացասական են ազդում ծնելիության վրա, իսկ առանձին դեպքերում՝ մարդկանց օրգանիզմում առաջանում են նորագոյացություններ՝ չարորակ ուռուցքներ:

Բնապահպանական հիմնախնդիրների լուծման արդյունքների շահառուները Չարենցավան համայնքի ազգաբնակչությունն է, որոնց համար ապահովվում է բարենպաստ / անվտանգ շրջակա միջավայր:

Վերոհիշյալ կազմակերպությունների կողմից արտադրության վնասակար արտանետումներից զատ 1990-ական թվականներին արդյունաբերական գոտին բնակելի գոտուց տարանջատող հատվածում կատարվել են հսկայածավալ ծառահատման աշխատանքներ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել վերականգնել անտառաշերտը:

### 2. Ծրագրի իրականացման ժամկետները և ծախսերը.

Վերը նշված կազմակերպությունների կողմից արտադրության հետ կապված վնասակար արտանետումների ազդեցությունը նվազեցնելու համար նպատակահարմար է կատարել ծառատնկման աշխատանքներ: Աշխատանքների նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 4000000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 15-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում, որը կնվազեցնի մթնոլորտի աղտոտվածությունը: Միաժամանակ առողջ ապրելակերպի խրխուսման և մասսայականացման, ինչպես նաև բնակչության

սոցիալական տարիքային խմբերի՝ ֆիզիկական վարժություններով և սպորտով զբաղվելու [illegible] բակերում և այլ հարմարեցված վայրերում տեղադրել մարզասարքեր:

Մարզասարքերի ձեռք բերման նախահաշվային արժեքը կկազմի 11049000 դրամ:

Հաշվի առնելով, որ ծրագրի իրականացումը կնպաստի բնակչության առողջության պահպանման և վերականգնման հիմնախնդիրների լուծմանը, խնդրում ենք քննարկել և մեր համայնքին տրամադրել ֆինանսական միջոցներ ծրագրի իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Կատ.՝ ֆինանսատնտեսագիտական*
*և գնումների կազ. բաժնի պետ Գ. Աֆյան*
*(0226) 4-34-34*

*Հավելված 2*

**Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Գումարը (Հազար ՀՀ դրամ) | Համամասնությունը (%) |
|---|---|---|---|
| | **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **4000.0** | **26.6** |
| 1 | *Դեկորատիվ ծառերի տնկում (գնդաձև ակացիա)* | *4000.0* | *26.6* |
| | **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ** | **11049.0** | **73.4** |
| 1 | *Մարզասարքերի ձեռք բերում* | *11049.0* | *73.4* |
| | **Ընդամենը** | **15049.0** | **100** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Կատ.՝ ֆինանսատնտեսագիտական և գնումների կազ. բաժնի պետ Գ. Աֆյան*
*(0226) 4-34-34*

<<Հաստատում եմ>>
Չարենցավան համայնքի ղեկավար
Վ. Շահգալդյան

<<14>> 07 2021թ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Չարենցավան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները>> ծրագրի շրջանակներում դեկորատիվ ծառերի և մարզասարքերի գնման

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքատեսակի անվանումը | Տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագրությունը | Միավորի արժեքը | Չափի միավորը | Ֆինանսավորումը կատարվելու է 2022 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար Չարենցավան համայնքին տրամադրվող սուբվենցիայով նախատեսված գումարների սահմաններում 100 %, երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Քանակը | Գումարը |
| 1 | Դեկորատիվ ծառերի տնկում (գնդաձև ակացիա) | 2-2,5 մետր բարձրությամբ: Մատակարարը պատասխանատվություն է կրում ձեռքբերվող տնկիների կենսունակության, որակի և քանակի ապահովման համար: Պատվիրատուն պարտավորվում է ժամանակին և պատշաճ կերպով իրականացնել ձեռքբերվող տնկիների, ծառերի ընդունումը, խնամքի և ջրման աշխատանքները: | 40000 | հատ | 0 | 100 | 100 | 100 | 100 | 4000000 |
| 2 | Մարզասարքերի ձեռք բերում | Բակային մարզասարքեր, նախատեսված տարբեր տարիքայի խմբերի համար: Մարզասարքերը ապահովված են մարմնի տարբեր մկանների զարգացման ֆունկցիաներով: Պատրաստված են ամուր մետաղական խողովակներից, փափուկ ջրադիմացկուն նստատեղերից և ներկված են հատուկ փոշեներկման եղանակով: | 170000 | հատ | 0 | 100 | 100 | 100 | 65 | 11049000 |
| Ընդամենը | | | | | | | | | | 15049000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ